

ԴԱՅԴՈՍԿ

Պաշտօնաթերթերը
Արեւմտեան
Ամերիկայի եւ Գանատայի
Հայ Երիտասարդաց
Դաշնակցութեան

The Official Publications of the
ARMENIAN YOUTH FEDERATION
Western United States + Canada



ardziv
արձիւ



Նուիրուած՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան Հարիւրամեակին
Dedicated to the Centennial of the First Armenian Republic

In 1976, the Armenian Youth Federation Western United States established its official publication – Haytoug – as a medium for Armenian-American youth to voice their opinions about a wide variety of issues. What initially began as a newsletter eventually evolved into a quarterly magazine with over 100 issues.

Ardziv magazine was first published by the Armenian Youth Federation of Canada in April 1991. It has been distributed free of charge within the community for those who strive for the national, social, and economic liberation of the Armenian people. Although the magazine had gone dormant for a few years, its new format as a monthly publication has made its way back into the homes of Armenians across the country. It has been and continues to be the leading voice of the Armenian-Canadian youth.

Both publications are distributed free of charge.

The opinions expressed in Haytoug and Ardziv are not solely and necessarily the opinions of the Armenian Youth Federation. The Western United States and Canadian regions encourage all Armenian youth to express their thoughts and feature their work in these publications.



Ardziv / Արծիւ - Haytoug / Հայդուկ

Contributors 4 Thoughts on What the Next 100 Years of Independence can Look Like for the Armenian Nation - Gev Iskajyan

Հայ-քու

Vessels - Pateel Jivalagian

Երբ չի մտում ելք ու ճար, «խենթ»երն են գտնում հնար - Մանուկ Ալեմեան

My Savage of Sevan - Hagop Agopian

The People's Revolution - Hrag Tomassian

Կանանց դերը ազգակերտման մեջ - Թալիա Ճապրայեան

3 Միտք//100 Ամեակ - Անդրանիկ Բաշա Գունտաքճեան, Մոսիկ Արզումանեան, Գեորգ Գրճալեան

A Brief Breakdown of Armenia's Military Power - Areg Aprahamian

Ցուլումը - Հովիկ Կետիկեան

On The 2nd Centennial of the First Republic - Khachig Joukhajian

Editors Լորի Պողիկեան / Ալեք Օհանեան / Միրնա Ֆուտուլեան
Lori Boghigian / Alek Ohanian / Mirna Foudoulian

Layout & Design Գառնի Արմենեան / Carnie Armenian

Cover Art Արփի Գաթրճեան / Arpy Katrjian

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ ազգը միշտ առիթներ փնտռած է տոնելու իր յաղթանակները եւ անոնցմով ներշնչուելու, որպէսզի կերտէ նոր պատմութիւն: 100 տարի անցած է այն օրուէն, երբ կերտեցինք մեր ներշնչիչ վերածնունդը՝ անկախ Հայաստանով, Առաջին Հանրապետութեան ծնունդով: Այս տարուան տօնակատարութիւնները զուգադիպեցան այլ իրադարձութեան մը՝ Ժողովրդային շարժումի մը, որ նոր էջ մը պիտի բանայ մեր պատմութեան մէջ: Այս երկու յաղթանակներն ալ կը յուշեն մեզի, թէ մենք կը պատկանինք յառաջադէմ ժողովուրդի մը: Սակայն, յեղափոխութիւնները չեն վերջանար ղեկավարներու փոփոխութեամբ ու քաղցրահինչին կանչերով: Յեղափոխութիւնը մեր անսահմանափակ միջոցն է, որով պէտք է վերակենդանացնենք մեր հաւաքական ինքնութիւնը: Շարունակական պայքարն է, որով պէտք է վերանորոգուինք ու ներշնչուինք: Եւ վերջապէս, յանձնառութիւնն է բարեփոխման եւ յառաջդիմութեան: Առաջին հանրապետութեան քայլերդը կ'ըսէ.

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած»:

Ըմբռնելով բառացիօրէն թէ փոխաբերական իմաստով այս բառերը՝ աշխատանքի կարեւորութիւնը կը մատնանշեն:

Չկան աշխարհի վրայ ոեւէ երկու անձեր, որոնք ունին ամբողջովին նոյն կարծիքն ու տեսակետը հարցի մը նկատմամբ: Հետեւաբար, մեր հասկացողութիւնները, մօտեցումները եւ լուծումները Հայաստանի ներքին եւ արտաքին հարցերուն վերաբերեալ՝ պիտի տարբերին: Եւ այս տեսակետները կը բխին այն տեսչանքէն, որ մենք բոլորս կ'ուզենք տեսնել մեր երազած կատարեալ Հայաստանը, որ արժէք կու տայ մեր դատին: Երբ այս «Հայդուկ» եւ «Արծիւ» պարբերաթերթերու բացառիկը կը կարդաք եւ կը վերյիշէք մեր յաղթանակներն ու դժուարութիւնները, կը թելադրենք, որ նաեւ մտածէք, թէ արդեօք Առաջին Հանրապետութեան ղեկավարներուն եւ գործիչներուն, Սարգսրապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի հերոսներուն իտեալներն ու յոյսերը ինչ էին ժամանակին, եւ վերջին 100 տարուան ընթացքին ինչպէ՞ս փոխուած են եւ կրնան փոխուիլ:

Մենք կ'որոշենք մեր ճակատագիրը: Մենք կը փշրենք մեր շղթաները:

Ի՞նչ ձեւով յեղափոխութեան պիտի մասնակցիս:

EDITORIAL

We always look for reasons to celebrate new beginnings. It has been 100 years since the independence of Armenia's first republic, and as we celebrated our inspiring rebirth this year, our people were at the forefront of a revolution--another new beginning. We were reminded on this anniversary that we are people who are resolutely dedicated to progress.

However, the revolution in Armenia does not start and end with a change in government. The revolution does not start and end with a few leaders, nor with melodious chants.

Revolution is an unbound tool we all must explore and manifest through our identity. It is the continuous struggle to learn, maintain, and improve our lives and those around us. A stanza in Armenia's first national anthem sings, loosely translated:

"Our Armenia, chained
And stuck for all these years,
Your brave children's holy blood
Will secure its liberation."

Whether these words are understood literally or symbolically, they indicate we must work for progress.

No two people in the world concur on all issues. No two perceptions or solutions to Armenian affairs are alike. The mere fact that we all speak passionately of a utopian Armenia is what keeps our cause simmering. As we reflect on our setbacks and accomplishments throughout this joint issue with Haytoug and Ardziv, let's not forget to ponder the hopes and ideals of the leaders of the first republic, the martyrs of Sardarabad, Gharakiliseh, and Pash Abaran, and those who took a giant and peaceful leap into a revolution 100 years later.

We decide our own fate. We break our own chains.

What part of the Armenian revolution will you make your own?

4 Thoughts on What The Next 100 Years of Independence Can Look Like for the Armenian Nation

Gev Iskajyan

Original Image: Haytoug April 1983

1. **Homeland:** On the heels of a peaceful revolution, the Armenian people have shifted the political status-quo in place. Establishing a belief in the democratic process and a rule of law is the first step towards a successful state. For a nation to succeed, it's people have to believe that they control the levers of change and thus, more importantly, are collectively accountable for the nation's future. The process of turning spectators into stakeholders will take much work and will require patience — while the country's political representatives have to be communicative and transparent throughout. In turn, the populace must be knowledgeable and honest about challenges that lay ahead. Hopefully, as we become increasing more able to address political and economic corruption, we also shed a light onto ourselves, and walk away from cynicism and detachment; Because the foundations of a new Armenia will be built on accountability.

2. **Diaspora:** The diaspora isn't philanthropy, and Armenia isn't a charity. I don't believe in a "Diasporan Senate" and having multiple governing bodies for one nation is neither effective nor fair. If Diasporans want a say in the affairs of the homeland — they should become dual-citizens. Dual citizens should also pay taxes, not a tax based on income, but a participatory tax (approximately \$100 USD per year) to maintain your citizenship and right vote. If we are to truly detach from our charity-based mindset, we must buy in to the nation building process.

3. **Culture:** I believe that for the last 100 years, we have seen a cultural stagnation, whether it be from the trauma of displacement, over 80 years of Sovietization, or ourselves. Our culture should be fluid, evolving and adapting with the collective identity of the nation. The rigid paradigms we've set in place about what an Armenian should look, act, and sound like must be shattered. There are no gatekeepers of culture and nobody has the right to serve as an authority on another Armenian's identity.

4. **Cause:** The days of pandering for recognition are over. There is no world power on Earth that doesn't know the genocide happened and our cause shouldn't hang in the balance of any other country's geo-political concerns. Our sights should be focused solely on justice — specifically in the form of divestment, boycotts, and sanctions. With over 8 million diasporan Armenians living in influential cities around the world, we can utilize the agency we have in our governments, businesses, and universities to stop financially supporting the Turkish state until reparations have been given. Asking for recognition will not get us far, but leveraging the global institutions which we have capital in against the Turkish economy — can.



հայ-ֆու

俳

句

Բարցրածայն կարդանք
սխալ արժեւորենք
ու յառաջ քալենք

Անունսին պայքար
Մտքերնին իրենց լոյս
Կը քալեն առաջ

Յատակ փորելով
Միգուլցէ ոսկի գտնեմ
Սակայն դեմս եր

Տիրութիւնը չար
Լաւատեսութիւնը խաւ
Չուտ երջանկութեան

Vessels.

Pateel Jivalagian

Vessels.

We are mere vessels.

Chambers that know

Hurting

Loss

and

Fear

and

More.

So

Much

More.

Our bodies harbor more than we know.

But there's one in particular.

Not confined by chains.

One that is free floating.

Trying to find a permanent home with in us.

She is Alive.

She knocks from Inside,
close fists pounding against the lining of our walls.

The echoes of our hollows
cause internal vibration.

We shake.

For we know
she will be unleashed...

...she is the Armenian Spirit.

This spirit is dormant.

Waiting...

Just waiting
to be summoned.

This spirit is dormant.

Waiting...

Just waiting
to be summoned.

Transcending time and space.

Traveling intrapersonally, enlightening the individual.

Traveling interpersonally, igniting the masses.

Where can this spirit be found?

Or should I ask,

Who can this spirit be found in?

A vessel that has unleashed this spirit is that of Diana
Apcar's.

Diana, an Armenian, lived in Japan for most of her
adult years.

During the Adana massacres in Turkey,

Երբ չի մնում ելք ու ճար, «խենթ»երն են գտնում հնար

Մանուկ Ալեմեան

Այս բառերը եղան սերունդերու շարունակական ներշնչումի աղբիւր: Այդ «խենթ»երը մեր ազգին բոլոր յաջողութիւնները կերտողները եղան, եւ որոնց մինչեւ օրս կը պարտինք մեր ազատ եւ անկախ հանրապետութիւն ունենալը: Որո՞նք էին այդ «խենթ»երը, ճիշդ ի՞նչ ըրին:

Ասոր պատասխանը պարզ է այն անձին համար, որ գիտէ Սարգսրապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի մարտերը, բայց արդե՞ծ բոլորը տեղեակ են այն դժուարութիւններէն, որոնց դէմ յանդիման գտնուեցան մեր «խենթ» հերոսները:

Անոնք երիտասարդ էին, չմոռնանք: Կեանքի փորձառութիւն չունէին տակաւին, իրենց թիֆլիսեան հանգիստ կեանքը լքելով, անոնք հայրենիք կերտեցին: Ժողովուրդին մնացորդ մոխիրները դարձուցին փիւնիկ եւ իրենց զոհողութեամբ հայ ազգին ապագայ, ուժ եւ յոյս տուին. յոյս մը, որ կազմակերպեց հայ համայնքներ, յոյս մը, որ հայութեան ինքնութեան ջահը վառ պահեց, յոյս մը, որ ազատ եւ անկախ Հայաստան կերտեց:

Պիտի չմոռնանք այս երիտասարդ «խենթ»երուն սխրագործութիւնները, եւ մենք, որպէս հայ երիտասարդներ, մեր պարտականութիւնն է յիշել ու յիշեցնել անոնց իրագործումները: Նաեւ մեր պարտականութիւնն է իրենց գործը շարունակել նոյն եռանդով եւ կորովով Մանուկեաններու,


Աղբալեաններու, Նազարբեկեաններու եւ Օհանջանեաններու: Եւ այս 100-ամեակի սեմին, այս է անոնց պատգամը յառաջիկայ սերունդներուն.

Սիրելի հայ երիտասարդներ, քաջալերուեցէ՛ք. միայն ձեր ներդրումով մեր ազգին նոր պատմութիւնը պիտի կերտուի: Հայաստանի Հանրապետութենէն ներս, վերջերս հայ երիտասարդը փաստեց, որ իր «խենթութիւն»ը ներշնչեց հազարաւոր հայորդիներ, որոնք Երեւանի փողոցներուն մէջ նոր սկիզբ կերտեցին, շարունակելով 1918-ի երազը՝ արդար եւ ժողովրդավարական հայկական պետականութիւն ստեղծել:

Մենք եւս, իբրեւ սփիւռքահայ երիտասարդներ, կ'ուխտենք շարունակել 1918-ի երթը՝ մեր գաղափարներով ու գործունեութեամբ: Ո՛չ Արամ Մանուկեան, ո՛չ Թովմաս Նազարբեկեան, ո՛չ Յովհաննէս Զաքաւնունի եւ ո՛չ Դրաստամատ Կանայեան վախցան ու կասկածեցան, երբ մոխիրներէն Հայաստան կերտեցին: Անոնք եղան «խենթ»եր՝ գաղափարի եւ աշխատանքի: Ապագան երիտասարդութեան ձեռքերուն մէջն է: Ո՛չ մէկը ձեզմէ այդ իրաւունքը կրնայ խլել: Դ՛րս էք այն ջահը, որ հայ ազգին լոյս կու տայ՝ երբ խաւար է ամէն կողմ:

Անդրադարձք մեր ազգի պատմության յաղթանակներուն, զորս երիտասարդներու ձեռքերով կերտուած են: Աշխատեցէք միշտ հաւատարիմ մնալ մեր վեհ գաղափարներուն եւ ծառայել մեր ազգին: Դ՛րև էք, որ անկարելին կարելի կրնաք դարձնել՝ ձեր վճռակամութեամբ եւ կորովով:

Ուժը մեր ձեռքերուն մէջ է, որովհետեւ կրնանք կերտել ապագայի Սփիւռքն ու Հայաստանը: Աշխատանքով, հաւատքով, գաղափարով եւ կամքով կը շարունակենք այն գործը, որ սկիզբ առաւ 28 Մայիս 1918-ին: Կեցցեն Մայիս 28-ը կերտող երիտասարդները: Կեցցեն արդարասէր հայ երիտասարդը եւ նամանաւնդ, կեցցէք դ՛րև, ջահակիրները յոյսի, արդարութեան, ազատութեան եւ ժողովրդավարութեան:



Պուրճ Համուտ, Զոկտեմբեր 2018
Լուսանկարիչ՝ Ռուբեն Ճանպազեան


MY SAVAGE OF SEVAN

HAGOP AGOPIAN

It was cold that morning, and I had missed my first alarm. Rushing to get dressed and having something to eat, I almost forgot to fill my water bottles, but it didn't matter. **I was about to participate in the biggest race of my life** and the previous 12 months of training with 14 hrs/week on the bike had lead up to this very morning.

The grueling Ride Around Lake Sevan is a 212 km race of endurance around one of the largest and highest altitude lakes in Eurasia. Taking place every May 28th, **I made it my goal to complete the ride for the 100th anniversary of our Independence.** The most serious physical and mental undertaking of my life.

Two weeks before the race, I arrived at Sevan to acclimatize to the 2000 m altitude of the lake and to train with one of Armenia's premier athletes, Andranik Margaryan. For 14 days, we biked and saw every corner of the course, from the millions of potholes and 15 km stretch of completely unpaved rough terrain, to the stray dogs that attack at the slightest sound. None the less, every second of the ride was post-card worthy. Sevan, and the region, is truly a gem in the crown of the Armenian Highlands. The hundreds of photos we took do not do it justice.



RACE: SAVAGE OF SEVAN

LOCATION: LAKE SEVAN

DISTANCE: 212 KM / 132 MILES

**ELEVATION: 2,000 M / 6,562 FT
ABOVE SEA LEVEL**

Photos courtesy of Hagop Agopian

At the 7 am start, **all those jitters evaporated, and for the following 8 hours I rode around the lake.** Crossing the finish line, it finally dawned on me that I had pushed past any limits I had set for myself. The significance of being in Armenia on May 28th and to know that we could have lost it all had it not been for the courage of the founders of the Republic to push past their limits was monumental for me. **Courage** to step outside my comfort zone made this goal, and dream, possible.



«Մենք մեր ֆետայի հեր
շատ կը պարտինք, սակ
նոր հերոսներու պէտք ուն

ՎԹ

Հայդուկ 1979, թիւ 6



ոսներուն
այն հիմա
ի նք...»



THE PEOPLE'S REVOLUTION

HRAG TOMASSIAN

MIND FULL. BRIMMING WITH UNJUST MEMORIES
AWAITING A SOUL, A PERSONIFIED SPIRIT
YEARNING TO CHANGE THE UNSCATHED REGIME
ENDING THEIR REIGN BEFORE THEY ACQUIT.
IGNITED. A REVOLUTION WOVEN IN VELVET!
GALE-LIKE. UNSTOPPABLE. RESOLUTE WITH PRIDE.
HINDERING THOSE IN POWER WITH RALLIES AND PROTESTS
TRANSCENDING. ONE VOICE NATIONWIDE.
ENIGMATIC WITHOUT DEATH, WITHOUT VIOLENCE
INDULGED, WITHOUT THE COLOR OF BLOOD-YET VELVET DOES SHINE
GLISTEN EVEN, TO EPITOMIZE THE STRENGTH IN UNITY OF PEOPLE,
HARMONIZING BELIEF AND DESIRE-SO DIVINE.
THE MOVEMENT ETERNAL, ENTICED AS HOPE
ENVISIONED TO BRIGHTLY LIGHT THE DARKEST OF DAYS
ENTHUSED! A PURPOSE REBORN-
NEUTRALIZE CORRUPTORS. END THEIR CRAZE



Կանանց դերը ազգակերտման մեջ

Թալիա Ճապարյան

Մանկութենես հայկական դպրոց յաճախած ըլլալով, անդամակցելով հայկական կազմակերպութիւններու եւ շրջապատուելով հայ աշխույժ տիպարներով՝ բախտաւորութիւնը ունեցած եմ լսելու անհամար պատմութիւններ՝ թէ ինչպէս դարեր շարունակ պարզունակ հայ կիներ դարձած են բացառիկ հերոսուհիներ՝ իրենց ամբողջ կեանքը նուիրելով իրենց ազգին գոյատեւման ու բարելաւման, միեւնոյն ժամանակ ազգասէր զաւակներ դաստիարակելով եւ ընտանիքի բոլոր պէտքերը հոգալով: Ռուբինայէն մինչեւ Սօսէ Մայրիկն ու Չապէլ Եսայեանը եւ բոլոր անոնք, որոնց անունները նոյնքան չեն յիշուիր, անկասկած միշտ շատ կարեւոր դեր ունեցած են մեր ազգապահպանման մէջ: Սակայն, նոյնիսկ եթէ անսահմանօրէն երախտապարտ եմ գիտնալով այս կանանց պատմութիւնները, զիս խորապէս կը յուզէ հայ կիներուն իրավիճակը այսօր Զայաստանի մէջ: Ներկայիս, մեր մայրենի երկրին մէջ, հայ կիները կը պայքարին երկու սեռերու միջեւ՝ հաւասարութեան, աշխատավարձի արդարութեան եւ ամենէն կարեւորը՝ համարժէք քաղաքական ներկայացուցչութեան ի խնդիր:

Անշուշտ յստակ է, որ այս իրավիճակը պէտք է փոփոխի շուտով, եւ իմ կարծիքովս այս փոփոխութեան ժամանակը հիմա է: Ինչո՞ւ: Որովհետեւ Զայաստանը կը գտնուի նոր հանգրուանի մը շեմին: Նոր սկիզբի աիթները արագօրէն կը հասնին մեզի, եւ կիները պէտք է ըլլան, ինչպէս միշտ, առաջին ճակատին վրայ: Մենք ներկայիս նոր երկիր կը կերտենք, նոր Զայաստան: Որպէսզի այս երազը կարենայ ըլլալ շօշափելի իրականութիւն, պէտք է հաստատենք նոր արժէքներ եւ վերահաստատենք մեր ինքնութիւնը իբրեւ հայ: Ուրեմն, ասոր համար է, որ Զայաստանը պէտք է լիովին օգտագործէ կանանց կարողութիւնները ամեն ձեւով:

Հայ կնոջ տեղը անպայմանօրէն ազգակերտման բեմին վրայ է: Ամենագորաւոր փաստը այս յայտարարութեան այն է, որ 100 տարիներ առաջ, Զայաստանի առաջին Հանրապետութեան հաստատութեան ժամանակ, հայ կինը ազդեցիկ դեր մը ունեցաւ ոչ միայն իր ուղղակի ներկայութեամբ կռուի դաշտին վրայ, այլեւ զինամթերքի ու բժշկական խնամքի հայթայթումով եւ իր բարոյական քաջալերանքով:

Սակայն, ամենէն բացայայտ ճշմարտութիւնը որ կու գայ Զայաստանի առաջին Հանրապետութենէն, այն է, որ չորս հայ կիներ ընտրուեցան որպէս խորհրդարանի անդամ: 1918-ին, երբ կանանց իրաւունքները համաշխարհային գետնի վրայ տակաւին շատ չէին յառաջացած, հայ կիները կարեւոր դեր խաղացին երկրի կրթական, ընկերային եւ դիւանագիտական գործունեութեան մէջ: Այժմ նոյնպէս ան պէտք է նոյն դերը կատարէ: Կիները տարբերօրոպէս եկող տեսնենաշխարհը, որովհետեւ տարբեր ձեւով համայնացած են եւ տարբեր փորձառութիւններ ապրած: Այս պատճառով է նաեւ, որ իսկական փոփոխութիւն տեսնելու համար երկրի մը մէջ անհրաժեշտ է, որ կիները քաղաքական պաշտօններ ստանձնեն եւ քաղաքական որոշումներու մէջ ձայն ունենան: Կանանց քաղաքական ներազդեցութիւնը առիթ պիտի ընծայէ կարգ մը անհրաժեշտ նիւթերու բնաւորման խորհրդարանէն ներս: Նաեւ կանանց կարծիքները նոր շունչ կրնան տալ Զայաստանի շատ խրթին արտաքին քաղաքականութեան հարցերուն շուրջ:

Ինչպէս արդէն շեշտեցի՝ նոր Զայաստանի կերտումը անհմատ պիտի ըլլայ, եթէ չներմուծուին նոր արժէքներ եւ երազներ: Ըստ ինձի, կիները պէտք է ունենան ամենէն ծանրակշիռ խօսքը, որովհետեւ իրենք միշտ կանգուն պահած են Զայաստանը, նամանաւանդ մեր պատմութեան ամենադաժան օրերուն, եւ այդ պատճառով ալ գիտեն, թէ ինչի կարիք ունի հայ ազգը, որպէսզի գոյատեւէ, եւ առանց կանանց գործօն եւ ամբողջական մասնակցութեան մեր նոր ծրագիրները կը մնան տկար երազներ միայն: Զայաստանի արդիականութիւնը կախեալ է կանանց նուիրումէն եւ յանձնառութենէն:

Մայր Զայաստանի արձանը կը կանգնի հզօր եւ հպարտ Երեւանի մէջ՝ պատճառի մը համար: Ան կը ներկայացնէ յարատեւ եւ անթափանցելի պաշտպանութիւնը, զորս հայ կիները տուած են Զայաստանին՝ անոր հազարամեայ պատմութեան ընթացքին: Ժամանակը հասած է կենդանացնելու այն արձանը եւ անդրադառնալու, որ Մայր Զայաստանի ոգին բոյն դրած է բոլոր հայ կիներուն սրտերուն մէջ: Անոր յոյսը, ուժը, հպարտութիւնը, արիւնքիւնն ու խնամքը պէտք է ըլլան այն գրիչները, որոնցմով պիտի գրենք մեր ազգի պատմութեան ամենէն փայլուն էջը: Յիշտով եմ նաեւ, որ ասոր զխաւոր հերոսուհիները պիտի ըլլան երիտասարդ հայուհիները:

3 Միտք//100 Ամեակ

1 Անդրանիկ Բաշա Գուևտաթեան

Հարիւր տարիներէ ի վեր մենք շարունակ կը վերյիշենք Հայաստանի առաջին հանրապետութիւնը, որ առիթը ստեղծեց հայ ժողովուրդին գոյատեւման: Սարդարապատի, Ղարաբախի եւ Բաշ Ապարանի ճակատամարտերու յաղթանակներով հայ ժողովուրդը առաւ անհրաժեշտ քայլ մը՝ դէպի իր արդար նպատակի իրականացումը: Իր վրեժխնդիր հայդուկներուն շնորհիւ էր, որ ան արժանացաւ իր կարճատեւ, բայց փառապանծ, երեք տարուան անկախ պետութեան:

Մայիս 28-ն կը նշանակէ յաղթանակ, կը նշանակէ անկախութիւն, կը նշանակէ պայքար: Հարիւր տարի անց, մենք ունինք ոչ միայն անկախ Հայաստան մը, այլեւ սփիւռք մը, նուիրած

որ հաւատարիմ մնալով իր հայրենիքին, անձնուրացօրէն ինքզինքը է Հայաստանի եւ հայ ժողովուրդի երազները իրականացնելու սրբազան նպատակին:

Արամ Մանուկեանի օրինակով ներշնչուած, մենք, իբր դաշնակցական երիտասարդներ, կը վերահաստատենք մեր հաւաքական կամքն ու ուխտը մեր հայրենիքին եւ հայ ժողովուրդին հանդէպ, միշտ ձգտելով մեր գերագոյն նպատակին՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանին:

Նիկոլ Աղբալեան ըսած է. «Երբ գիշերը գայ, մտքէ ձեր հոգիի սենեակը եւ խօսեցէք ձեր խղճի հետ եւ ըսէք, արդեօք աշխատէր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղբի՛ր էք այնքան անձնագրի, որքան Արամը, տուէր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»:

Բաշ Ապարանի ու Ղարաբախի յուշարձանները
Լուսանկարիչ՝ Ալէք Օհանեան



2 Մոսիկ Արգումանեան

Ապարան, Մայիս 2018
Լուսանկարիչ՝ Յարութ Գասապեան



Անհնար կը համարեմ կարճ տողերով ներկայացնել հայ ազգի պետականութեան վերածնունդը, կործանումէն հարիւրաւոր տարիներ ետք, հայկական հողերուն վրայ, որ նոյնիսկն հրաշք մըն էր՝ իրագործուած հերոսներու արիւնով, 28 Մայիս 1918-ին: Սակայն Միքայէլ Նալպանտեան այդ թուականէն տարիներ առաջ պատկերացուց զայն, երբ ըսաւ իր «Երգ ազատութեան» բանաստեղծութեան մէջ.

«Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անգոր թելերով
Ազատութիւնն գրկեցի»

Ճիշդ էր անգոր էինք իրավիճակով, բայց ուժեղ էինք կամքով: Ինչպէ՞ս ուժեղ չըլլայինք, երբ հայ ազգը ծնունդ տուած էր Արամներու, Դրօսներու, Սիւլիկեաններու, որոնք բառացիօրէն անգոր թելերով ազատութիւնը գրկեցին՝ առաջնորդելով, մղելով, կազմակերպելով ճակատագրական մարտեր (Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաբիլիսէ), որոնց շնորհիւ հայ ազգը առաջին հերթին փրկուեցաւ երկրորդ ցեղասպանութենէ մը եւ վերստին դարձաւ հողի եւ պետականութեան տէր ազգ:

Այո, այդ անգոր մանուկը առողջ մնաց 900 օրեր, ապա 71 տարիներ ուժաթափուեցաւ, սակայն 1991 Սեպտեմբեր 21-ին վերակենդանացաւ եւ իր ազատութիւնը հիմնեց այն հիմքին վրայ, զոր իր նախահայրերը արեան գնով կերտած էին:

Փանք հերոսներուդ, փանք զաւակներուդ, հայ ժողովուրդ, փանք ու պարծանք նուիրեալ հերոսներ ծնող Յայ Յեղափոխական Դաշնակցութեան:

3 Գեորգ Գրճալեան

Հայ ժողովուրդը ապրած է չարչարանքով լեցուն կեանք մը, բայց ասկէ մէկ դար առաջ կրցաւ հասնիլ իր դարերու երագին, որն էր տեսնել Հայաստանը ազատ եւ անկախ:

Ապարան, Մայիս 2018
Լուսանկարիչ՝ Յարութ Գասապեան



28 Մայիս 1918-ին ծնունդ առաւ Հայաստանի հանրապետութիւնը՝ Արամ Մանուկեանի նախագահութեամբ, վերջ դնելով Թուրքիոյ յարձակումներուն Հայաստանի վրայ: Ան Մայիս 28-ն վերածեց յաղթութեան խորհրդանշանի՝ բոլոր զոհերուն թափած արեամբ կերտուած, եւ փաստեց համայն աշխարհին, եւ մանաւանդ Թուրքիոյ, որ հայ ժողովուրդը միշտ ողջ է եւ պիտի մնայ հզօր՝ իր սեփական, ազատ եւ անկախ հայրենիքին հողին վրայ:

Ահաւասիկ մենք կը տօնենք 100-ամեակը Հայաստանի առաջին անկախութեան, հպարտութեամբ բարձրացնելով մեր եռագոյն դրօշը՝ իր կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն գոյներով

աշխարհի բոլոր կողմերը: Այսօր **հպարտօրէն եւ ուրախութեամբ կը յիշենք ու կը տօնենք հայոց պատմութեան ամենէն անմոռանալի յաղթանակներէն մէկը:**

Այսօր հայ ժողովուրդը կը համարուի այն բախտաւոր ազգերէն մէկը, որ առիթը ունեցաւ տեսնելու իր հայրենիքին անկախութիւնը, ի պատիւ մեր հերոսներուն, որոնք իրենց արեան գնով կերտեցին ազատ եւ անկախ հայրենիք: Այսօր Հայաստանը մաս կը կազմէ համաշխարհային ընտանիքին՝ ունենալով իր դիրքը աշխարհի քարտէսին վրայ:

Մենք պատիւ պետք է զգանք մեր նախահայրերուն մղած երեք ճակատամարտերով՝ Սարդարապատով, Ղարաբիլիսեով եւ Բաշ Ապարանով: Առանց այն հերոսներուն, որոնք պայքարեցան եւ իրենց արիւնը թափեցին վասն հայրենիքին անկախութեան, մենք այսօր արժանի պիտի չըլլայինք ունենալու ազատ եւ անկախ հայրենիք մը իր հզօր բանակով ու մշակոյթով:

Մեր նախահայրերը դարերու ընթացքին իրենց արիւնը թափելով հայրենիքին համար՝ սերունդներուն օրինակ դարձան, որ տեր դառնան եւ պաշտպանեն հայրենիքին սուրբ հողերը: Այսպիսով, մեր վիզին պարտքն է յարգել մեր նախահայրերը եւ հերոսները: Այսօր, իւրաքանչիւր հայ պետք է միշտ պատրաստ ըլլայ, որպէսզի ձեռք ձեռքի տալով Հայաստանը վերածենք աւելի հզօր երկրի մը:

Ցաւօք սրտի այսօր Սփիւռքի կարգ մը գաղութներու մէջ ակնյայտ է, որ հայրենասիրութիւնը պակսած է երիտասարդութեան մէջ. այսօր ոչ մէկ սերունդ իրաւունք ունի ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ-ը սոսկ բառ մը կարծելու. մեր նախահայրերը կեանքի գնով սիրեցին ու պաշտեցին մեր հայրենիքը, իսկ այսօր ցաւալի է, որ արդէն երիտասարդներու խաւ մը սկսած է կորսնցնել հայրենիքի սերը:

Իւրաքանչիւր հայ պետք է պարտաւոր զգայ հայրենասիրութեամբ դաստիարակելու յաջորդ սերունդները, որպէսզի անոնք չկորսնցնեն իրենց սերը հայրենիքին հանդէպ եւ թեւ ու թիկունք կանգնելով անոր՝ հաւատան, որ մենք հզօր ենք, երբ միասնակամ ենք:

Ահաւասիկ ժամանակը հասած է նեցուկ կանգնելու հայրենիքին եւ բանակին, մինչեւ որ հասնինք մեր գերագոյն նպատակին՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանին:

3 Միտք//100 Ամեակ

A BRIEF BREAKDOWN OF ARMENIA'S MILITARY POWER

Areg Aprahamian

Since the April War, Armenia has invested a lot of time, money and effort to improve the capabilities of its armed forces. These improvements include the acquisition of new military equipment, the installation of new systems along the front line with Azerbaijan, investments in the national military-industrial complex, and some administrative changes. We can say that these past two years have greatly contributed to the strength of the Armenian armed forces, so that they become again the most powerful military force in the Caucasus. Changes in the top echelon of the military in addition to the purchase and development of state-of-the-art military equipment are two very important points to consider.

First, the fight against corruption in the military, which has been a problem since the creation of the first regular units in the early 1990s, was a big step forward for the country. Before 2016, we had seen everything: evasions of conscription, theft of food for soldiers, collusion. The last conflict was an awakening for the Armenian government and was one of the reasons for the dismissal of Seyran Ohanian and the appointment of Vigen Sargsian as Minister of Defense. We must also remember the arrest of three logistics officers and the dismissal of the Deputy Chief of Staff of the Armed Forces, Lieutenant-General Haykaz Baghamian. The army is moving in the right direction, slowly but surely. Everything is not perfect, but if the trend continues, the armed forces will be completely cleansed of corruption in the near future.

Photo by Carnie Armenian
Pictured: Rubo, 18, Shushi.

Secondly, the military equipment. **The conflict in April 2016 shows once again that the training and the morale of the troops are more important than the amount of armament that the adversary has.** Azerbaijan, although having more fighters, ammunition and other military equipment, failed to break through the defense of the Artsakh army. In spite of everything, the Armenian generals had a great need for long-range artillery, radar and modern anti-aircraft defenses to counter the new gear of the enemy. Arms bought by Armenia in 2015 arrived mostly in the summer of 2016, just in time to participate in the military parade on 21 September. Among these weapons are the BM-30 (Smerch) multiple rocket launcher system, with a range of 90 km, the TOS-1A thermobaric multiple rocket launcher system (Sontsepyok), the Infauna electronic countermeasure radar. (also used by Russian VDV units) and Avtobaza and, finally, the Iskander-E ballistic missile system, with a range of 300km and can carry a nuclear warhead.



2017 was also a year of rearmament for Armenia. A 100 million dollar contract is signed with Russia that includes the purchase of 9K333 (Verba) anti-aircraft hand-held missiles, 9M133 (Kornet) anti-tank missiles, RPO-A (Shmel) thermobaric rocket launcher, Tigr light armored vehicles and more. Armenia also decides to upgrade its armored forces by modernising its T-72 tanks to the T-72B3M/B4 version (which makes the T-72 an equal of the T-90MS tank).

The development of the local military-industrial complex is also a priority for the ministry of defense. The “ArmHiTec-2018” Arms Exhibition has shown the general public the achievements of Armenian weapon engineers

and technicians in recent years. In the foreground, kamikaze, regular and reconnaissance UAVs, sniper rifles, pistols, radars, infra-red systems and remote controlled turrets. Some rumors would suggest a tank model (secret, for now) will be unveiled in the early 2020s. The country still has a long way to go before becoming a major exporter in this area, but he is going in the right direction.

However, caution is required, since the power of a country goes through its economy, not its military strength. The war against Azerbaijan should not distract us from internal economic and social problems. Nevertheless, the armed forces remain an important factor in contemporary Armenian society.



Ձուլումը

Հովիկ Կետիկեան

Սփիւռքի մէջ հայ երիտասարդին սպառնացող ամենամեծ վտանգներէն մէկը ծուլումն է, որ առաջ կու գայ օտար մշակոյթներու հետ շփումէն: Օտար մշակոյթներուն հետ շփումը սփիւռքի մէջ անխուսափելի է: Դժբախտաբար, սակայն, ոմանք օտարներու հետ շփուելով բոլորովին կը մոռնան իրենց ինքնութիւնը, մշակոյթն ու կենցաղային բարքերն ու սովորութիւնները, եւ իրենց մէջ կ'արմատանայ օտարասիրութիւնն ու օտարամոլութիւնը, որոնք ի վերջոյ պատճառ կը դառնան մեր երիտասարդութեան ծուլումին:

Մենք, իբրեւ դարաւոր պատմութիւն եւ մշակոյթ ունեցող ժողովուրդի զաւակներ, մեր պարտականութիւնն է պահպանել նախ մեր ինքնութիւնը, մեր ազգայնութիւնը, հայրենասիրութիւնն ու յատկապէս՝ մշակոյթը, սովորութիւններն ու բարքերը: Եթէ հայ երիտասարդը չպահպանէ եւ յաջորդ սերունդներուն չփոխանցէ այս արժէքները, ապա ի՞նչ պիտի ընէ: Մեր ճիտին պարտքն է այս մէկը, որպէս հայ ազգի զաւակներ, որպէս Յեղասպանութիւն ապրած բայց եւ վերապրած ազգի զաւակներ, ջարդուած բայց հայ մնացած ժողովուրդի զաւակներ:

Իմ կարծիքովս, հայեցի դաստիարակութիւնը կը սկսի մեր տուններէն ներս, նախ՝ օտարներու հետ ամուսնութիւններէ խուսափելով եւ կազմելով հայ ընտանիք, ապա՝ հայկական վարժարան յաճախելով, որուն կողքին նաեւ յաճախելով մեր հայկական եկեղեցիները, ակումբներն ու մշակութային միութիւնները, որոնք մեծ դերակատարութիւն ունին հայ երիտասարդին հայեցի դաստիարակութիւն փոխանցելու գործընթացին մէջ:

Նաեւ օտարներու հետ շփուելով, ոչ թէ մոռնանք մեր ինքնութիւնը եւ դառնանք օտարամոլներ ու օտարասերներ, այլ պահպանենք մեր ազգային ոգին, մենք ծանօթացնենք օտարին մեր բարքերն ու սովորութիւնները, ինչպէս նաեւ մեր մշակոյթը, որդեգրենք օտարէն միայն այն ինչ որ կը համապատասխանէ մեր մտայնութեան, ինչ որ կրնայ զարգացնել ու բարելաւել մեր կենցաղն ու կեանքի ընթացքը, որդեգրենք շինիչը, լաւն ու օրինակելին եւ հեռու մնանք յոռի ու աւերիչ երեւոյթներէն, որոնք ծուլումի եւ փճացումի հիմնական պատճառներն են:

Որպէս հայ երիտասարդ, կը քաջալերեմ մանաւանդ հայկական ակումբներ յաճախելը, որովհետեւ սփիւռքի մէջ հայ մնալու միակ գրաւականները կը հանդիսանան մեր ակումբները:

On the 2nd Centennial of the First Republic

Khachig Joukhajian

The year is 2118. The streets of Glendale have imprints of Armenians everywhere. There are churches strewn all across town, with their unique pointed domes. There are museums, monuments, murals, Artsakh Street, and a TUMO center. Out-of-towners who notice ask about the distinct cultural presence all over the city. They receive the same response every time:

- “Oh that’s Armenian culture. They actually used to be a majority here, but they’re all but gone now.”
- “What happened to them?”
- “Well, they came here about 100-150 years ago, prospered, and then moved back to their homeland.”

This scenario repeats in Watertown, Toronto, Buenos Aires, even Beirut. Armenians have left their mark in their host cities, but hardly any representatives remain. They contributed much to these cities, but they're gone now.

This is not another tragic tale in the story of the Armenian people in a history too often marked by cycles of catastrophe and survival. No. **This is a tale of triumph.** Armenians are scarce in these places, because they have nearly all gone and rebuilt their republic - հոլխոսկ ու տոսֆոսկ. They have made a life for themselves, established a future for their children and grandchildren. And, they are happy. They are happy in the classical sense; they seem to have attained eudaimonia, flourishing, well-being, true happiness.

When one walks down the streets of Yerevan, it's hard to ignore the sounds of all the accents, dialects and standards of Armenian being spoken, not to mention all the different languages diasporans brought with them. The unsuspecting tourist might have the impression that this is a multi-ethnic city, full of foreign nationals. And sure, there are plenty who come to do business with the "Emerald Mountain Republic," as the country came to be known after its economic upsurge.



However, for the most part, the diversity attained in Armenia is a result of the dissolution of those communities dispersed across the globe - what was formerly known as the Diaspora. That dissolution was a century-long process, in a series of migration movements. Some called it *tebi yergir*, a term that carries political connotations involving nation-building. Others called it repatriation to the homeland. Others still, tracing their roots to Western Armenia, took issue with that term. There were even some who were deeply connected to their country of birth, and they called themselves expats who moved to Armenia. However, it seemed not to matter what they called it. Pedantic debates over definitions and distinctions gave way to action. One thing became clear, the diasporans were moving to their republics (back then Armenia and Artsakh were two separate states). And, as they came from their host countries, they brought their inherited cultures and languages with them, something the government deemed an asset, rather than a threat. One can hear French here, Spanish there, Portuguese, Italian, and so on. But for all this diversity, there is also a profound sense of unity amongst the people. Most Armenians can comfortably speak both Eastern as well as Western Armenian, and linguists are fascinated by how new colloquial forms of the language have emerged as well.

Those who share a background sometimes tend to seek one another out, but the broad social landscape is one most seek to traverse. Communities based on host-country of origin exist, which helps to keep foreign languages alive in the country, but generally everyone interacts with everyone, since Armenian is the lingua franca. They enjoy sharing their experiences and inherited cultures with one another, turning the people of this country into global citizens simply by virtue of their local interactions. Somewhere along the way, Armenians seem to have embraced the mosaic makeup of their nation/trans-nation. They did not shed themselves of their families' ancestries, but embraced their differences along with their commonalities.

This appearance is not unique to Yerevan, either. Places like Vanadzor, Dilijan, and Gyumri have become bustling centers, each with its distinct appeal. Stepanakert and Shushi, though small in size, are arguably the most beautiful Armenian cities. Initially, most came to settle in Yerevan, but visionaries who saw the immense potential of these places fashioned cities envied by the East and West alike. However, the village communities are perhaps more enviable still. Whereas true farming communities were disappearing all over the world a century earlier, Armenia led the way in the re-emergence of traditional farming by drawing from their own past practices, as well as by studying practices still extant in rural communities such as those in China and Japan. Of course, there are a number of large industrial farms, much needed to feed the 30 million population of Armenia, but the food produced by the small farms are what the people usually seek out. The architecture of the villages, once dilapidated and using cheap aluminum roofing, now features designs from around the world, reflecting styles of European and Armenian houses and villas from the high middle ages all the way through contemporary sustainable housing designs, varying from region to region, always drawing tourists from abroad. See, Armenian architects brought design ideas with them from around the world as well.

As education improved, architecture was incorporated into the curriculum, and as civic engagement per capita increased, the new generations had local public discourse about what they wanted their communities to look and feel like. They realized the significance of the physical landscape on everyday life, and made informed decisions regarding these issues. They realized that the underdeveloped state of much of the country was an opportunity, a playground for design experiments. In the towns of Javakhk, for example, they implemented a revival of 19th century Tbilisi, with intricately carved woodwork on balconies. Education was a key in Armenia's current flourishing state. One of the first big moves was of course the centers of creative technology. Spaces like those of TUMO and COAF empowered youth by fostering creativity and tech skills. Another major player in the country's development was Teach for Armenia, who found individuals with leadership qualities and sent them to underdeveloped communities for two years at a time. These young teachers were mostly from Armenia, but diasporans came too in due time, and they gave hope to students in disadvantaged situations, equipped them to become leaders, and taught them to take ownership of their communities and country. Higher education also took a turn, when wealthy Armenians from around the world began to fund renowned scholars in just about every field -- from Humanities to STEM -- to teach in Armenian universities as visiting professors. By bringing in the best and brightest, Armenia's universities produced hosts of brilliant graduates, who turned the private and public sectors of Armenia into the shining star of the Caucasus.

Eventually, a new intelligentsia emerged, one that surpassed the Zartonk era thinkers, raising the academic standard to that of Oxford and Cambridge.

Finally, the Diaspora made a transition, from simply providing financial and material resources, to one of knowledge and skill sharing. The focus shifted to increasing the **value of the country's human capital**, by training the citizens in everything from healthcare and IT, to construction and automotive maintenance. Efforts came from Diaspora organizations big and small, from individual initiatives as well as international NGO projects, and the results were astounding. **Armenia became an exemplar for the world.** The model was repeated in Ireland and Greece, and is currently being attempted in many other countries. In a broad sense of the word, it was education that brought Armenia to where it is today.

The first generations of repats missed a few things. The roads weren't great, so they missed driving fast in their nice cars. Once the beautifully paved multi-lane highways were complete though, trips to Artsakh could be made in just three hours time. Those who want more can go drive on the Autobahn, and with Armenia's version of RyanAir, quick, \$20 flight to Berlin, and about the same to most cities in the geographic neighborhood. Armenians do a lot more traveling now, adding to their appearance as **citizens of the world.**

Hospitality was one of the first industries in young Armenia, and when the Diaspora started coming in waves, they brought dishes from their host countries with them. **The Syrian Armenians were the first. They broadened the culinary landscape** with dishes like Armenian beef tartare (chikufte) and delicious dumpling yogurt soup (manti). The South American repats who opened restaurants had to import many ingredients. However, there had been pioneers who'd been growing quinoa and chia seed there since the early 21st century, and others followed this example, farming what crops they could for the growing demand in international cuisine.

As for cured meats, a few guys went to train with Italian masters, and began producing prosciutto di parma, capicola, and gourmet sausages. Today, the country boasts some of the best artisanal meats in the world.

One can find just about every kind of restaurant in Armenia, including Asian cuisine. Even though there weren't many Armenians in that part of the world, the economic boom made it quite easy to recruit chefs from the region, who were embraced not just by repats, but also by the khash loving locals (after all, pho and ramen aren't too far off). In a word, **Armenia has become a top destination for gastro-tourism.**

How did this process get under way? Well, it started with some benevolent philanthropists, some revolutionaries, and a handful of corrupt officials taking it too far. By the time the peaceful, yet spirited revolution was over, there was a **widespread sense of hope in the future of Armenia, which translated into organized, as well as individual efforts towards serious nation-building.** At first, for the most part, what you had was optimism--optimism in what the government would do for Armenia. This mode would have surely failed. It would have resulted in the government failing to deliver on their promises, and in the return of those seeking their own private interests. It would have resulted in the return of corruption and theft and continued exploitation of the poor and working classes. Instead, this government was looking for cooperation, and fortunately, the transnational Armenian population did not settle for optimism and sit on the sidelines.

They heard the words of Cornel West, that "there is a need for audacious hope. And it's not optimism.... optimism is a notion that there's sufficient evidence that would allow us to infer that if we keep doing what we're doing, things will get better. I don't believe that. I'm a prisoner of hope, that's something else. Cutting against the grain, against the evidence."

“Hope and optimism are different. Optimism tends to be based on the notion that there’s enough evidence out there to believe things are gonna be better, whereas hope looks at the evidence and says, ‘It doesn’t look good at all. Doesn’t look good at all. Gonna go beyond the evidence to create new possibilities based on visions that become contagious to allow people to engage in heroic actions always against the odds, no guarantee whatsoever.’” **Armenians realized that they needed to act**, in a marathon-runner, long-term-commitment fashion, with well thought out, goal-oriented action. Diaspora organizations all directed their efforts towards Armenia. Teams of architects and engineers were sent over to build quality housing and infrastructure. Centers were opened that trained citizens in civic engagement, libraries were built and filled with literature in all subjects (texts which were largely unavailable before), and thousands of translations to and from Armenian were completed in just a few years.

One of the primary resources in this regard was a crowdfunding website, designed specifically for Armenian needs. Donors could find campaigns that fit their concerns, and those who told the best story and consistently reported on their progress got the most funding, while half-baked ideas and scams were quickly flagged and bagged. This democratized the field, eliminating the dependency on large organizations. Anyone with planning, marketing, and implementation skills could carry out their project, speeding up the nation-building process. A patronage feature allowed donors to find artists, writers, and scholars, so that they could consistently fund what they considered the most talented and valuable work. It turned out that the Diaspora was looking for ways to contribute, and this format allowed them to connect with the projects they wanted to see realized most and the locals they could collaborate with best.




This tebi yergir movement didn’t focus on Armenia directly. Rather, with an emphasis on Armenia as a viable home for future generations, the long-time Diaspora project of հայակերտում/հայաւնալում (cultivation of Armenian [identity]) gained a more focused purpose and direction. And so, Armenian language and history teachers were paid large salaries, enough to raise a family on, and in result many came to compete for the position. Suddenly, highly effective teachers came on the scene, and soon enough students were not just reading higher level texts, like those of Aghpalian, Varentian, Nicheanian, and Beledian, but were also doing critical analysis, having well-articulated discourse on aesthetics, political theory, ethics, theology, and the like. Scholarships in Armenian Studies became widely available, and grants were made available for research in subjects from public health and psychology to political science and philosophy, all with an emphasis on Armenia.



These are just some examples - glimpses into the world of a flourishing people. I could also talk about how their structures have all been rebuilt, how their literature is now read around the world (in translation as well as original), how their music is heard everywhere - operas, festivals, award winning film scores, and so on. But, the point of this exercise is to show **possibilities, with the hope that they're realized**. As I was writing this article, someone showed me a recently defended PhD dissertation from Yerevan State University, about utopia as a modeling schema for the future. I write this article with that in mind, as an exercise in projecting a partial picture of the Armenia I would like to see. Some of the projections were trivial or silly, others serious and essential. I think each of us should develop a detailed vision of their ideal future for Armenia, and work towards achieving it. I like to think of relationships as people dreaming together. If enough Armenians start dreaming together, we might just create a new Armenia.

At first, the goal wasn't to dissolve the Diaspora, but eventually that's what happened, because the more they succeeded in their efforts and the healthier the Diaspora became, the more diasporans became connected to Armenia, thus sowing the Diaspora's eventual demise. As long as it maintained a stagnant existence, it fed its own existence, through a quasi-nationalistic cognitive dissonance that never fully committed to the Republic. Once the orientation shifted toward the homeland, the Diaspora became active, cooperative, and flourishing. In business terms, they worked themselves out of a job. Over the course of decades, diasporans nearly all became repats, even many of those who were Armenian on just one grandparent's side.

[illegible]



Aram Manukian
Արամ Մանուկեան



100 1918-2018
ԱՄԵՐԿԱ



Հայ Յեղափոխական Դաշնակցության Գանատայի
Երիտասարդական Միություն
Armenian Youth Federation of Canada



Հայ Երիտասարդաց Դաշնակցություն
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Երիտասարդական Միություն
Armenian Youth Federation - Western United States